ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Տնորհակալութեամբ ստացանք առ խմբագրութիւնս ղրկուած հետեւեալ նոր հրատարակութիւնքն.

1. ԿԻԼԻԿԻԱ փոքր աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ։ Մատենադարան «Արաքսի» տպ. Պետերբուրգ. տպրն. Ի. Լիբերմանի, 1894. գինն է 1 ռ. 25 կ. ոսկեկազմով 2 ռ. «Կիլիկիան» ցանկացողները դիմելու են այս հասցէով՝ M. Siméon Goulamiriantz S. Petersbourg.

Փոքր վեցտասանծալ գրքոյկ մ'է 400 երես։ Հեղինակը իւր այս աշխատասիրութեան գըլխաւոր առաջնորդ ունեցած է Հ. Ղեւոնդ Վ. Ալիշանի Սիսուան համագրութիւն Հայկական Կիլիկիոյ, ընդարձակածաւալ երկը. զոր՝ թէպէտ յառաջաբանին մէջ կ'ըսէ՝ թէ «միզ գըլխաւոր առաջնորդ Սիսուանը ընտրել չյօժարեցինք» (էջ 8), սակայն իմանալու է ըստ այժմու քաղաքականին եւ վիճակագրականին, վասն զի նոյն ինքն ի վերջաբանին կ'ըսէ. «Այս գործը պատրաստելու ժամանակ գըլխաւոր առաջնորդ ենք ունեցել Հայր Ղ. Ալիշանի Սիսուանը, եւ խոստովանում ենք՝ թէ առանց այդ առաջնորդին՝ յոյժ վտիտ պէտք է լինէր մեր արտադրութիւնը, մանաւանդ պատմական բաժինը։ Սիսուանը, Կիլիկիոյ հայերէն եւ օտար տեղագրութիւնների մէջ կանգնում է իբրեւ մի հրաշակերտ, անհուն հմտութեան եւ անխոնջ քննութեան արդիւնք» (էջ 384)։

Ինչպէս «Սյրաքս» այսպէս նաեւ «Կիլիկիան» տպագրուած է ընտիր թղթի վերայ եւ գեղարուեստական ճաշակով, նկարները թուով են 33, որոց մի քանին չկան ի Սիսուանի, լաւ յաջողուած են։ Գուլամիրեանցի տպագրութիւնքն Ռուսահայոց մէջ առաջին տեղին կը գրաւեն, եւ երբեմն նաեւ հաւասարապէս կը մրցի եւրոպական ընտիր տպագրութեանց հետ։ — Դարձեալ կը յայտնենք մեր շնորհակալութիւնն ի կողմանէ Սիսուանի հեղինակին՝ առ ինքն ղրկուած ոսկէկազմ օրինակին համար։

2. ԱՐՑԱԽ. երկասիրեաց Մակար Եպիսկոպոս Բարխուտարեանց. տպ. Բագու, տպրն Արօր. 1895 գինն 1 ռ. 50 կ.

Ծախուում է Բագուում Պ. Շերազեանցի մօտ. Թիֆլիսում կենտրոնական գրավաճառանոցում. Շուշում Պ. Բագրատ Տէր-Սահակեանցի. Երեւանում արժ. Գրիգոր քահ. Սուքիասեանցի։

Մակար Եպս. Բարխուտարեանցի այս երկասիրութիւնը՝ որ կը պարունակէ իւր մէջ մեր բնաշխարհի 15 գաւառաց միայն մանրամասն նկարագիրն, իրաւամբ պատիւ կը բերէ Գեր. երկասիրողին.

Ընթերցողք՝ այս գրքիս յառաջաբանը կարդալով՝ կարեն ամբողջական կազմութեան վրայ ստոյգ գաղափար մի առնուլ։ Հեղինակին միակ նպատակն է եղած քրքրել եւ ի վեր հանել այս նահանգիս մէջ մինչեւ ցայժմ թաքուն եւ անծանօթ մնացած պատմական եւ հնախօսական փշրանքները, որոնք յիրաւի պտուական եւ անգին ակունքներ են մեզ համար. արդէն իսկ ժամանակն իւր աւերիչ ժանեաց կուր ըրած է շատ եւ շատ այդպիսի յիշատակարաններ, ուստի եւ մեծապէս երախտապարտ պէտք է լինինք Գեր. հեղինակին, որ ամենայն խոչընդոտն առ ոչ ինչ համարելով՝ ըստ կարի ջանացած է եւ յաջողած իւր նպատակին հասնիլ։

3. ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ Գ. ՊՐԱԿ, ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՀԱՅՈՑ ՏԱՂԵՐ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ. — Կ. Կոստանեանց տպ. Թիֆլիս տպր. Մ. Շարաձէի եւ ընկ. 1896.

4. ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ԿՏԱԿԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ. 36 էջերէ բաղկացած տետրակ մի։

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

1. — Որ և իցէ կիրք՝ թէ հեղինակութիւն և թէ թարգմանութիւն, որ խմբագրութեան նուէր ղրկուի, ԲՈԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆի երկամսեայ պրակաց մէջ պիտի ծանուցուի Նոր հրատարակութիւնք խորագրով։

2. — Այն հեղինակներն և կամ թարգմանիչք՝ որոնք փոխանակութեամբ իրենց գրոց կը ցանկան մեր տպած (նոյնագին) գրքերէն ունենալ, սկսաք են առաջուց իմացնել մեզ՝ թէ ինչ գիրք է յղելիքը, և ինչ անար փոխարէն պահանջելիքը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայկական տպագրութեան պատմութիւն՝ սկզբնաւորութենէն մինչ առ մեզ 145
Ցորդոր ատենական առ սուլթանին Եղիսաբէթ քաղաքի վասն կանգնելոյ զդպրատուն ի քաղաքի անդ . 152

Ուղևորութիւն Շանտրի յարևելս . 158
Արթին Պէյ նախարար արտաքին գործոց և վաճառականութեան ի թագաւորութեան Մեհէմէտ Ալի փաշայի 1800-1859 . . . 162
Ազգային հարտարապետ մը . 170
ԵԴՄՈՆԴ ԴԷ ԱՄԻՋԻՍ. — Ցուշք Լոնդրայի 172
ԿԱՐՄԷՆ ՍԻԼՎԱ. — Գերթուած . — 179

Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն . 182
Դիտողութիւն մի 190
Նոր հրատարակութիւնք . . . 190

SOMMAIRE

L'histoire de l'imprimerie arménienne, du commencement jusqu'à nos jours 145
Discours prononcé devant le magistrat de la ville Elisabethopoli pour la fondation d'un collège arménien dans la même ville . 152
À travers l'Arménie russe . . 158
Artin Bey ministre des affaires étrangères et du commerce sous le règne de Méhémet-Aly Pacha (1800-1859) . . . 162
Un architecte arménien . . . 170
EDMOND DE AMICIS. — *Souvenirs de Londres* 172
Carmen Silva. — Poème épique, Jéhovah 179
Faustus de Byzance ou l'origine de l'eglise arménienne . . . 182
Une observation 190
Nouvelles publications . . . 190

digitised by A.R.A.R.@